ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

22 նոյեմբերի 2024 թվական թիվ 265-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՋՐԱՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ԱՆՑՈՒՄ 5-ՐԴ ՇԵՆՔԻ ԹԻՎ 12 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼ ԱՐՍԵՆ ՄԿՐՏԻՉԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՉՈՐՍ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605–րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի օգոստոսի 13-ի թիվ 1326-Ն որոշման N 4 հավելվածի 062-001 ծածկագրով տողի 10-րդ սյունակում կատարված փոփոխությունը («Մանկապարտեզ» բառը փոխարինվել է «բնակելի շենք» բառերով), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2020 թվականի օգոստոսի 19-ի թիվ 01/09081-2020 գրությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի բնակիչ Արսեն Մկրտիչի Մարտիրոսյանի և նրա ընտանիքի անդամների համատեղ դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն համարվող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի Ջրաշինարարների փողոց, 4-րդ անցում, 5-րդ շենքի, թիվ 12, չորս սենյականոց բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 11042022-08-0039, տրված 2022 թվականի մարտի 3-ին), 149.26 քառակուսի մետր մակերեսով, ընդհանուր օգտագործման տարածքների և հողամասի նկատմամբ բաժնային սեփականության իրավունքով նվիրատվություն կատարել Արսեն Մկրտիչի Մարտիրոսյանի ընտանիքի հետևյալ չորս անդամներին.

1) Մարտիրոսյան Արսեն Մկրտիչի (ծնված 1955 թվականի հուլիսի 2-ին), ինքը,

2) Մարտիրոսյան Անահիտ Թերջանի (ծնված 1958 թվականի նոյեմբերի 14-ին), կինը,

3) Մարտիրոսյան Բելա Արսենի (ծնված 1981 թվականի նոյեմբերի 23-ին), աղջիկը,

4) Խաչոյան Ալբերտ Տիգրանի (ծնված 2004 թվականի մարտի 6-ին), թոռը,

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ նվիրառուների հետ կնքել գույքի նվիրատվության պայմանագիր, ապահովել դրա նոտարական վավերացումը և անշարժ գույքի նկատմամբ քաղաքացիների իրավունքների պետական գրանցումը՝ վերջիններիս միջոցներով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -24 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

Ա. ԱՅՎԱԶՅԱՆ
Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ս. ՍԻՄՈՆՅԱՆ
Մ. ՄԱԹՈՍՅԱՆ
Շ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Վ. ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ՄՈՒՇԵՂՅԱՆ
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Թ. ՍՈՒՎԱՐՅԱՆ
Մ. ՄՆԱՑՅԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Ա. ԻԳԻԹՅԱՆ
Ա. ՄՔՈՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ՉԱԼՈՅԱՆ
Գ. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Վ. ԹՈՐՈՅԱՆ
Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Թ. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ԴՐՄԵՅԱՆ
Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

22 նոյեմբերի 2024 թվական
գյուղ Ախուրյան